Լրամշակված նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-1187[1]-11.11.2025-ՏՏԳՇ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գնահատման գործունեության մասին» 2005 թվականի հոկտեմբերի 4-ի ՀՕ-189-Ն օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «չկառուցապատված հողերի» բառերից հետո լրացնել «ոչ աճուրդային կարգով» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Տեղեկանք
փոփոխվող հոդվածների վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գնահատման գործունեության մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ 2005 թվականի հոկտեմբերի 4-ի ՀՕ-189-Ն օրենքի~~-~~ 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «չկառուցապատված հողերի» բառերից հետո լրացնել «ոչ աճուրդային կարգով» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ « ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1187-11.11.2025-ՏՏԳԾ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ Կառավարություն	**«Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին հոդված**	Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս առաջարկում ենք պահպանել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը առ այն՝ «Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս հետեւյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի ընդունման	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

			տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, օրենսգրքի վերնագիրը եւ «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն: Հետևաբար առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածում ««Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք» 2001 թվականի մայիսի 2-ի ՀՕ-185 օրենքի» բառերը փոխարինել «2001 թվականի մայիսի 2-ի Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի» բառերով:		
2.	ՀՀ Կառավարություն	«**Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ամբողջ տեքստ**	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Նորմատիվ իրավական ակտում միեւնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միեւնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ»: Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք Նախագծի 2-	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

			րդ հոդվածով նախատեսվող Օրենսգրքի 67-րդ հոդվածում նոր խմբագրությամբ շարադրվող 2-րդ մասում, նոր լրացվող 2.1-ին մասում եւ 68-րդ հոդվածում կիրառել «կառավարության» ձեւակերպումը՝ համապատասխանեցնելով այն Օրենսգրքում կիրառվող ձեւին:		
3.	ՀՀ կառավարություն	«**Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագիր**	Քանի, որ Նախագծով նախատեսվում է իրականացնել մեկ լրացում՝ առաջարկվում է **նախագծի վերնագրում «լրացումներ» բառը փոխարինել «լրացում» բառով:**	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունները:	Ընդունվել է:
4.	ՀՀ կառավարություն	**Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ**	Առաջարկում ենք Օրենսգրքի 68-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ, քանի որ այնտեղ առկա կարգավորումները վերաբերելի	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

		կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդված	են դասական աճուրդներին և էլեկտրոնային աճուրդ կազմակերպելիս կարող են շփոթություն առաջացնել: Հետևաբար, առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝ ***«Հոդված 3.*** Օրենսգրքի 68-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 68. Աճուրդի կազմակերպումը 1. Աճուրդը, բացառությամբ սույն օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերի, կազմակերպում է համայնքի ղեկավարը էլեկտրոնային համակարգի միջոցով՝ կառավարության սահմանած կարգին համապատասխան:»:		

5.	ՀՀ կառավարություն	«Գնահատման գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	«Գնահատման գործունեության մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածից առաջարկում ենք հանել « Հայաստանի Հանրապետություն» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջները:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է: